

մեծ յարատեւութեամբ, լաւագոյն համարեցան տաճկաց Սուլթանին հպատակութիւն խոստանալը՝ բնական է՝ իրենց սովորական դարձած իրաւունքներն եւ սովորոյթքը ամբողջ պահելով\*): Չմշկածազի ու Սողմանի, Բալու-ձապաղջրոյ ու Էլիլի, Ատաքի ու Նը-փըրկերտի, Հիզանի ու Բաղիշու բէկերը՝ Նէմբրան, Իսպայիրտ եւ Միկիս, որ պարսից զօրաց ներկայութիւնն չուզելով կը տանէին եւ առհասարակ միշտ կատուած ըլլալէ չէին ախորժեք, չուտով իրենք զիրենք ազատ ըրին: Սասնոյ բէկը՝ Մուհամմէտ՝ անոնց օրինակին հետեւեցաւ եւ պարսիկները Խարզանէ ու Խարիք արտաքսեց: Մեկը Խալիլ նորէն ձեռք անցուց Սղերդը՝ իր ցեղին գլխաւոր տեղը: Բայց ամենէն առաջ Ամթայ բնակիչները ոտքի ելած էին: Քիւրդ բէկերու զիմաղբութեան պատճառով պարսիկները օգնական զօրք չկըրցան առնել, եւ Ամիթն անգամ տաճիկներն առին՝ փոխադարձ յաջողութեամբ մղուած բազմաթիւ ճակատներէ ետքը»): (էջ 58):

Նոյն հեղինակը խօսելով սուլթան Սէլիմի եւ ցեղապետներու միջեւ կայացուած համաձայնութեան մասին, կը գրէ. —

«Քիւրդ ցեղապետներու հետ բանակցած ատեն՝ սուլթան Սէլիմ՝ Բագէչցի քիւրդ Իզբիս Մոլլային ազդու ճարտասանութիւնն իրեն օգնութեան առած էր: Տիգրանակերտ տաճկական վիլայէթ եղաւ եւ 19 գաւառակի բաժնուեցաւ. այս գաւառակներուն 11-ն ուղղակի Բարձր Դունէն կախում ունէր, ութը հասն աւատառուներու տրուած էր: Բալու, Էգիլ, Գենջ, Հասդու եւ Ջէզիրէ իրրեւ կէս-անկախ աւատութիւնք իրենց ցեղապետներուն ձեռքը մնացին ժառանգականութեամբ. առանձինն Փէրմաններով ասոնց ամէն անձնաշնորհութիւնները հաստատուեցան: Օսմանեան պետութեան Քրդատանի այս մասերուն վրայ ունեցած իշխանութեան հիմը կը կազմեն այս դաշնադրութիւնք: Ընդարձակ երկիրներ քիւրդ բէկերու կամայական իշխանութեան յանձնուած

մնացին, այսպէս նախ Հասդու՝ այսինքն՝ Խարզան եւ Սասուն: Այս կողմերը Սուլթանի ճոխութիւնը մեծ չէր. ո՛չ հարկ կը վճարուէր եւ ո՛չ զինուոր կը տրուէր»): (էջ 59):

Քիւրդերու այդ ժամանակուան տաճկական օրիանքասիւնը միայն աւազակային ազատութեամբ կարելի չէ բացատրել:

Ճիշդ է, որ քրդական բնաւորութեան երբեք չէր պատշաճեր պարսկական խստութիւնը՝ մանաւանդ գողութեան եւ աւազակութեան խնդիրներու մէջ, մինչդեռ օսմանեան իշխանութեան եէնիչէրիական կազմը մեծ ասպարէզ կը բանար քրդական աւազակային հակումներուն առջեւ, սակայն, խնդիրը աւելի պետական-քաղաքական բնոյթ ունէր: Պարսկական տիրապետութիւնը փոքրիկ իշխանապետութիւններու սանձը իր ձեռքին մէջ առած էր եւ ամէն քայլափոխին իր զինուորական ուժը կը զգացնէր անոնց: Քիւրդերը կը ձգտէին իրենց անկախութիւնը պահպանելու, ու այդ պարագային, բնականօրէն պիտի ուզէին նախ Շահ-Իսմայէլի տիրապետութիւնէն ազատիլ: Անոնք օսմանցիներու վրայ կը նայէին որպէս եկուորներու եւ կը յուսային պահպանել իրենց անկախութիւնը:

Եթէ քիւրդերն ու հայերը այդ թուականներուն զիտակցէին իրենց սպառնացող վտանգը եւ միացած ուժերով՝ Հայաստանի եւ Քիւրդըստանի պետութիւնը կազմակերպէին, կամ գոնէ քիւրդերը կարողանային օգտուիլ այն դարաւոր կէս-անկախութիւնէն, որ տեւեց 1514-էն մինչեւ 1839-ը, բնական է պատմութիւնը կրնար արգարացնել այն ընթացքը, որ բռնեցին քիւրդերը սուլթան Սէլիմի ժամանակ: Բայց մենք զիտենք, որ պատմութիւնը այդ ճանապարհով չբնաց. ուստի կարելի է ըսել որ Չարլէրանի ճակատամարտի մէջ պարսիկներու պարտութիւնը դժբախտութիւն մըն էր ոչ միայն պարսիկներու, այլ նաեւ քիւրդերու եւ հայերու համար:

Յաթհի սուլթան Մուհամմէտ Բ-ի օրերէն սկսած հայերը կրօնական առանձնաշնորհներ կը վայելէին: Հայոց պատրիարքը Պոլիս կը հաստատուէր, Տաճկահայաստանի գաւառներէն հեռու: Մինչդեռ քիւրդերը սուլթան Սէլիմին կը ներկայանային իբր կազմակերպուած

\* ) Դըզըրաշները պարսից Շահ-Իսմայէլի կողմնակից էին եւ կռուեցան օսմանցիներու դէմ եւ չարք մը վայրերու մէջ կոտորուեցան: Կ. Ս.